ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում.

Դպրոց՝ Չիվայի միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Աիդա Խալաթյան

Ուսուցիչ՝ Կարինե Մինասյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գլուխ 1. Դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրները մայրենիի միջոցով .. 5
1.1 Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը տարրական դպրոցում 5
1.2 Մայրենիի դասագրքերը և դրանց դասավանդման դերը կրտսեր դպրոցական արժեհամակարգի ձևավորման գործում 6
ԳԼՈՒԽ 2. Գործնական աշխատանք 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Մարդկային հասարակության ստեղծած հոգևոր և նյութական արժեքները բնութագրում են հասարակության զարգացման մակարդակը և փոխանցվում սերնդեսերունդ: Մարդկային բարձրագույն արժեքների ձևավորման ամենակարևոր դարբնոցը դպրոցն է:

Հայ իրականությունում ակնհայտ փաստ է, որ դպրությունը, գիրն ու գրականությունը միշտ էլ դիտարկվել են որպես բարձրագույն արժեք: Ինչպես նշում է Լ. Թորգոմյանը. «Անվիճելի է, որ կրթությունը, լուսավորությունը առաջնային են եղել Մ. Մաշտոցի արժեքային գիտակցության մեջ: Ապացույցը՝ նրա ողջ կյանքը, պետական – հասարակական և մանկավարժական գործունեությունը և այն մեծաթիվ հոգևոր արժեքները, որոնք ստեղծվեցին գրերի գյուտից հետո, և շարունակվում են ստեղծվել ցայսօր: Դրանով իսկ Մ. Մաշտոցը յուրաքանչյուր հայի ազգային գիտակցության մեջ է՝ որպես հայոց մեծ Սուրբ, հայ ժողովրդի ազգային մեծագույն արժեք» (7, էջ 85):

Ս. Լ. Ռուբինշտեյնը փաստում է, որ արժեքները առաջնային չեն, նրանք մարդու, աշխարհի փոխհարաբերության արդյունք են, որոնք միավորում են այն ամենը, ինչ ստեղծել և արժևորել է մարդը իր պատմական զարգացման ընթացքում:

Սերունդներն օղակ են անցյալի և ապագայի միջև և ապահովում են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը և փոխանցում հետագա սերունդներին: Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավաժների ուշադրության կենտրոնում:Աշակերտներին պետք է հաղորդակից դարձնել հասարակական, հոգևոր բարոյական, ազգային և համամարդկային արժեքներին, գիտությանը, արվեստին, մշակույթին: Ձևավորվեն դպրոցականների արժեքային կողմնորոշումները, զարգացնեն ինքնահարգանքի, սեփական բարձրարժեքության գիտակցումը, դաստիարակեն բարյացակամ վերաբերմունք շրջապատի մարդկանց նկատմամբ:

Արժեքները և արժեքային համակարգը մարդու և ողջ հասարակության կյանքի և մշակույթի անբաժան մասն են: Մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Անհրաժեշտ է անհատին ոչ միայն գիտելիքներով զինել, այլ նաև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորել:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից հասարակությունն ընթանում է կրթության արդիականացման ճանապարհով, որն ուղեկցվում է արժեքների վերագնահատմամբ և արժեքների վերաիմաստավորմամբ:

Գլուխ 1. Դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրները մայրենիի միջոցով

1.1 Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը տարրական դպրոցում

Աճող սերնդի կրթության և դաստիրակության առաջին քայլերը իրականացվում են դպրոցում՝ 1 - 4-րդ դասարաններում: Տարրական դասարաններում կրտսեր դպրոցականները պատկերացում են կազմում շրջապատող իրականության մասին տարբեր ճանապարհներով, ձեռք են բերում գիտելիքներ, դրան զուգընթաց կրթվում ու դաստիարակվում:

Տարրական դասարաններում մանկավարժի խնդիրը ոչ միայն կրտսեր դպրոցականների կողմից որոշակի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովումն է, այլ նաև նրանց մեջ անձնային որոշակի որակների, խորը համոզմունքների, զգացմունքների, սովորությունների արժեհամակարգի ձևավորումը, որոնք կհամապատասխանեն տվյալ հասարակության պահանջներին և բարոյականության նորմերին:

Ընդհանուր առմամբ, արժեհամակարգի ձևավորումը կրտսեր դպրոցականների մոտ նպատակ ունի ձևավորել հայրենասեր անձ և քաղաքացի, որը պետք է գիտակցի սեփական մշակույթի արժեքների կարևորությունն ու նշանակությունը և դառնա դրանց կրողը, լինի հայրենասեր, հասկանա, որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում, կարևորի աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ: Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին ու ճշմարիտը: Գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք, գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումն ու գերագնահատումը:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցականների արժեհամակարգի ձևավորումը բավականաչափ բարդ և շարունակական գործընթաց է և երկար ժամանակ է պահանջում:

Իսկ ինչպե՞ս կրտսեր դպրոցականներին հնարավորություն տալ ճանաչել, բացահայտել ոչ միայն իրենց շրջապատող աշխարհը, այլ նաև սեփական անձը և իրենց

դերը հասարակության մեջ: Այդ հնարավորություններն ընձեռում են մայրենիի դասագրքերը, որտեղ կիրառվող քայլերը կներկայացնեմ ստորև:

Առարկայական չափորոշչում հստակ նշվում է, թե տարրական դպրոցն ավարտողն ինչ արժեքային համակարգ պետք է ունենա: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերին ներկայացվող պահանջները բազմազան են, դրանցից ամենակարևորներից մեկը դասագրքերի դաստիարակչական գործառույթն է: Մայրենիի դասագրքերի միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարտադրել, այլև տեղեկություններ են ձեռք բերում Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, ազգային սովորությունների, մշակույթի մասին, ինչպես նաև բազմաթիվ աշխարհաճանաչողական և լեզվական գիտելիքներ, անձնային բարձրարժեք որակներ, զարգանում է նրանց գրական, գեղագիտական ճաշակը, ձևավորվում է լեզվամտածողությունը:

1.2 Մայրենիի դասագրքերը և դրանց դասավանդման դերը կրտսեր դպրոցական արժեհամակարգի ձևավորման գործում

Աստիճանականության սկզբունքով (պարզից բարդը) սովորողները առաջին դասարանից սկսած ձեռք են բերում գիտելիքներ, կրթվում և դաստիարակվում են: Այդ գործում մեծ դեր ունեն նաև մայրենիի դասագրքերը, որոնք ուսուցիչների համար ուղեցույց են հանդիսանում և լուծում են մի շարք կարևորագույն խնդիրներ:Այդ դասագրքերը, ընդհանուր առմամբ, համապատասխանում են տարրական դասարանների համար նախատեսված դասագրքերին ներկայացվող հիմնական պահանջներին: Մասնավորապես դասագրքերը շարադրված են պարզ և մատչելի,նկարազարդումները հիմնականում բովանդակային են, գրավիչ և համապատասխանում են սովորողների տարիքին: Մայրենիի դասագրքերը ձևավորում են որոնողական միտքը, զարգացնում են սովորողների ստեղծագործական մտածողությունը, ճանաչողական ընդունակությունները, ինքնուրույն աշխատանքի հմտությունները:

Մայրենիի երրորդ դասարանի դասագրքերը նպաստում են սովորողների մոտ այդ անձնային որակների և արժեքների ձևավորմանը: Մասնավորապես.

- իր ազգային պատկանելիության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում,
- հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ,
- ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ,
- ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում՝ գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն :

Դասագրքերում ընդգրկված թեմատիկ նյութերում զետեղված ստեղծագործությունները որքանո՞վ են նպաստում կրտսեր դպրոցականների մեջ հայրենասիրության դաստիարակմանը: Գործող դասագրքերը, հատկապես երրորդ և չորրորդ դասարանների, իրենց թեմատիկայով ընդհանուր առմամբ բավարար միջավայր են ստեղծում հայրենասիրություն դաստիրակելու համար: Մայրենիի դասագրքերում հայտնի հայ հեղինակների ստեղծագործությունները ուսուցանելով սեր ենք սերմանում մեր հայտնի մեծերի հանդեպ, որոնց գործերով մեզ ճանաչել են նաև Հայաստանի սահմաններից դուրս: Թեմատիկ խմբերում ներառված տարաբնույթ դասանյութերի ճիշտ կազմակերպման ընթացքում մի նոր նրբերանգ կավելացվի կրտսեր դպրոցականի արժեհամակարգում:

Հայրենասիության վերաբերյալ թեմատիկ խմբում ներառված են հետևյալ դասանյութերը՝ «Հայկ և Բել», «Սասունցի Դավիթ», «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց», «Բաբելոնյան աշտարակաշինություն», «Մխիթար Հերացին ու տակառագործը», «Երկնքի բոլոր աստղերը ճանաչում էին նրան», «Քաջ Անդրանիկ»: Նշված դասանյութերից յուրաքանչյուրը կրտսեր դպրոցականին սովորեցնում են սիրել ու գնահատել ազգային արժեքները, լեզուն, հայրենիքը, ճանաչել ազգային հերոսներին, որոնք տարբեր բնագավառներում իրենց գործով սխրանքներ են կատարում, անմահանում, և ողջ աշխարհում բարձր պահում հայի անունը:

Մայրենիի երրորդ դասարանի դասագրքի բովանդակությունը և դրանում ներառված դասանյութերի դաստիարակչական նշանակությունը ակնառու է:

Դիտարկենք այս թեմատիկ խմբում ընդգրկված մի քանի դասանյութ, որոնք սովորողների կրթության և դաստիարակության գործընթացում ունեն կարևոր դեր և նշանակություն: Օրինակ՝ «Հարստություն» բանաստեղծությունը ուսումնասիրելով սովորողները կարևորում են գրքի դերն իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Իմանում են, որ գրքերը սովորեցնում են լինել ազնիվ, բարի, արդարամիտ, համեստ: Կարդացողը

միշտ ավելի խելամիտ որոշումներ է կայացնում: Գիրք սիրող մարդը տարբերվում է մտքի ճկունությամբ ու խելքով: Սովորողը պետք է իմանա, որ ըստ հեղինակի, գիրքն ուժ կտա կարդացողին, կօգնի նրան դժվար ժամին, կսովորեցնի կյանքում ապրել հպարտ ու ազնիվ: Այն գարնան երազ է, երգեր, թովքեր, հույս ու ընկեր, անսահման հարստություն: Իրական հարստությունը մտքի, խելքի, գիտելիքների հարստությունն է: Գիրքը մեզ ավելի համարձակ է դարձնում, սովորեցնում է օգտակար լինել մյուսներին,լինել բարեկիրթ, զարգացած ու խելացի: Աշակերտը հասկանում է, որ մի խելքը լավ է, երկուսն՝ ավելի, և որքան էլ խելացի լինի, կարդացած ու բանիմաց, կարելի է չիմացածը ուրիշից հարցնել: Կարողանա նշել գրքի դերն իր կյանքում: «Թագավորն ու հողագործը» դասից հասկանում են, որ ծերունին աշխատասեր էր, համեստ, համարձակ, նպատակասլաց , բարեսիրտ, խելոք, երախտագետ, իսկ թագավորը՝ բարեհոգի, ազնիվ, գնահատող, շռայլ: Իմանա, որ ինքն էլ բնության մի մասնիկն է, և բնությունն իր խնամքի կարիքն ունի: Դարի հիմնախնդիրներից մեկը՝ գլոբալ տաքացումը մեղմելու համար անհրաժեշտ է ավելացնել անտառապատ տարածքները: Հովհ. Թումանյանի « Ամենից լավ տունը » դասանյութը ուսումնասիրելով աշակերտները կարողանում են գնահատել իրենց տունը, հայրենիքը, տղայի վերաբերմունքը մոր նկատմամբ: Հասարակության մեջ իր տեղն ու դերի գիտակցման ձևավորմանն է նպաստում «Տանկը թանգարանում» բանաստեղծությունը,քանի որ բովանդակային առումով շատ պարզ է, մատչելի սովորողների համար, բայց միևնույն ժամանակ շատ խորիմաստ է: Պարզ հերոսների օգնությամբ սովորողները հասկանում են, թե այս աշխարհում ինչպես պետք է ապրել, իմանում են, որ երբ աշխարհից չարը վերանա, մարդիկ իրար նկատմամբ ավելի հանդուրժող ու ներողամիտ կլինեն, նախանձ ու ագահ չեն լինի և պատերազմներ չեն սանձազերծվի: Դասն ավարտվում է հետևյալ եզրահանգմամբ. «Այսպիսով, այս աշխարհում ապրենք այնպես, որ զենքեր տեսնենք միայն թանգարանում»: «Սեպտեմբերի 21» դասանյութի օգնությամբ աշակերտները հարստացնում են իրենց գիտելիքները սեփական երկրի մասին և վերջում տրվում է հետևյալ եզրահանգումը. «Այսպիսով, աշխարհը գեղեցկացնում են մարդիկ ու նրանց լավ արարքները: Դու էլ այս աշխարհի մարդկանցից մեկն ես»: Այս ամենը նպաստում է, որ երեխան գիտակցի, որ ինքը հասարակության մեջ ունի իր տեղն ու դերը և պետք է կարողանա դրսևորել արժանավայել պահվածք: Ծնողների, տարիքով մեծերի նկատմամբ հարգանքի դրսևորման գիտակցման ձևավորմանն ու զարգացմանն են նպաստում «Մայր սագի հեքիաթը», որտեղ արժևորվում է մոր դերը և վերջում նշվում է Հ. Շրազի բանաստեղծական տողերը. «Երբ նեղն եմ ընկնում, երբ հույսն է հանգչում, նախ՝ մորս,

ապա՝ Աստծուն եմ կանչում»: Նույն նպատակն ունի նաև «Իմ դասագրքերը» բանաստեղծությունը, որտեղ նշվում է, որ մայրիկի բարի խոսքերը, հայրիկի ձեռքերն ամենալավ դասագրքերն են, և եզրահանգումն է. « Այսպիսով, դեպի մեծ աշխարհ տանող պատուհանը քեզ համար բացում են առաջին հերթին քո ծնողները»: «Մխիթար Հերացին ու տակառագործը» դասանյութը հնարավորություն է ընձեռում, որ սովորողները հասկանան ու գիտակցեն աշխատանքի դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Ուսումնառության արդյունքում սովորողները կարողանում են ինքնուրույն գիտակցել և հասկանալ, որ ամեն մարդ պետք է սիրի իր աշխատանքը և զբաղվի միայն այն գործով, որն իրեն դուր է գալիս և որում նա վարպետ է:

Առաջին թեմատիկ խմբում քիչ չեն նաև առածները, ասացվածքներն ու դարձվածքները,որոնք ևս ունեն շատ մեծ դաստիարակչական նշանակություն և բխում են տվյալ օրվա թեմայի գաղափարից:

- Ինչքան էլ գիտուն լինես, չիմացածդ մի անգետից հարցրու:
- Խոսք կա՝ սարի գլուխ կհանի, խոսք կա՝ սարից ներքև կբերի:
- Օտարության մեջ ապրողի հացը դառն է, ջուրը՝ թույն:

Յուրաքանչյուր դասի վերջում տրված հեղինակի ամփոփիչ խոսքն ու ուղերձն աշակերտներին ևս մեծ արժեք են ներկայացնում:

Այսպիսով ուսումնասիրելով թեմատիկ խմբում ներառված դասանյութերը, կարող ենք նշել, որ դրանցից յուրաքանչյուրն իր կարևորությունն ունի սովորողների դաստիարակչական գործընթացը կազմակերպելիս:

Այս թեմատիկ խմբում ներառված դասանյութերից յուրաքանչյուրը սովորողների մոտ ձևավորում են ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ, հայրենասիրություն, աշխատանքի կարևորության գիտակցում, սեփական և այլոց աշխատանքի արժևում և գնահատում:

Տարրական դասարաններում շատ է կարևորվում սովորողների գեղագիտական դաստիարակության ճիշտ կազմակերպումը, սովորողների կողմից գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողությունները: Մայրենիի երրորդ դասարանի դասագրքի երկրորդ թեմատիկ խմբի՝ «Բաց արա թերթերդ՝ տեսնենք հրաշքներդ» բոլոր թեմաները նպաստում են, որ սովորողները սիրեն իրենց հայրենի բնաշխարհը, կարողանան տեսնել և գնահատել բնության գեղեցկությունը և դերը մարդու կյանքում, ինչպես նաև նպաստում են նրանց գեղագիտական ճաշակի

ձևավորմանը: Գեղագիտական ճաշակի ձևավորմանը նպաստում է նաև այն, որ դասագրքի յուրաքանչյուր էջը նակարազարդված է, աչքի է ընկնում գունեղությամբ, գեղեցիկ նկարներով: Օրինակ՝ «Տերևը» և «Տերևաթափ» բանաստեղծությունները նպաստում են, որ երեխաները սիրեն բնությունը, հիանան բնության գեղեցկությամբ:

Ժողովրդական բանահյուսության կարևորագույն տեսակներից է առակը, որն ունի շատ մեծ դաստիարակչական նշանակություն, ուստի կարևորվում է դրանց ներառումը տարրական դասարանների դասագրքերում: Օրինակ «Հնարամիտը» դասանյութը ուսումնասիրելիս սովորողները կհասկանան, որ մարդ չպետք է որևէ գործ սկսի առանց նախօրոք մտածելու, թե ինչով այն կվերջանա, բացի այդ սովորեցնում է գնահատել գիտելիքը, խելքը, և տրվում է հետևյալ եզրահանգումը. «քանի դեռ խոսքը բերանումդ է՝ դու ես նրա տերը, երբ բերանից դուրս է գալիս, նա է քո տերը»: Մեծ դաստիարակչական նշանակություն ունի նաև Խոզն ու ագռավը առակը, որի գլխավոր գաղափարն այն է, որ սովորողները գնահատեն և հասկանան բնության, բուսական աշխարհի կարևորությունը, սովորեն ճիշտ վարվեցողության կանոնները: Ստեղծագործությունը նաև հնարավորություն է ընձեռում համեմատել խոզի և տղայի արարքները և դրանից ճիշտ հետևություններ անելու կարողություններ ձևավորել:

ԳԼՈՒԽ 2. Գործնական աշխատանք

Այսպիսով, մայրենիի դասագրքում ընդգրկված դասանյութերը սովորողների մոտ ձևավորում են ազգային պատկանելիության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում, հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություններ:

Առանձնացրել եմ Հովհ. Թումանյանի «Ամենից լավ տունը» բանաստեղծությունը

ՄԱՅՐԵՆԻ

3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ ԱՄԵՆԻՑ ԼԱՎ ՏՈՒՆԸ

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Համակցված

Համագործակցային՝ կերպարվեստ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. <u>Գիտելիքների համակարգ</u>

Արտահայտիչ կընթերցեն բանաստեղծությունը՝ ուշադրություն դարձնելով առոգանության նշաններին:

Կամրակայեն բարդ բառերի ուղղագրության վերաբերյալ ունեցած գիտելիքները:

2. <u>Կարողությունների և հմտությունների համակարգ</u>

Կկարողանան առանձնացնել նկարագրական հատվածները: Արձակ ձևով կվերարտադրեն բանաստեղծությունը՝ համառոտ կամ ընդարձակ կարտահայտեն իրենց կարծիքը հերոսի բնավորության և վարքագծի վերաբերյալ: Կնկարագրեն իրենց տունը:

3. <u>Արժեքային համակարգ</u>

Դաստիարակել սեր դեպի հայրենի տունն ու օջախը, հայրենիքը:

Անհրաժեշտ պարագաներ

Պաստառ՝ բառերի տեսակներն ըստ կազմության, նկարներ

Դասի ընթացքը ԽԻԿ համակարգով

Խթանման փուլ

Աշակերտների նախնական գիտելիքները վեր հանելու նպատակով կիրառել խմբավորման մեթոդը, որը կխրախուսի երեխաներին ազատ ու անկաշկանդ մտածել անցնելիք թեմայի շուրջ:

Գրել առանցքային բառը:

Գտնել ընտրված թեմային առնչվող բառերն ու բառակապակցությունները:

Աշակերտներին առաջարկել թվարկել, թե ինչ գիտեն իրենք տան մասին: Գրատախտակի կենտրոնում նկարել տուն՝ ճառագայթներով: Մտագրոհի միջոցով ճառագայթների վրա գրել տունը բնութագրող որևէ բառ կամ բառակապակցություն՝ շինություն, օջախ, ընտանիք, տանիք, ծնող, ծննդավայր, հայրենիք, Հայաստան, ապահովություն, հարստություն, տաք ճաշ, սեր, կարոտ, հոգատարություն, քար (դռան առջև դրված՝ նստելու), օրորոց, շեն տուն, հայրենի տուն...

Ըստ որի եզրակացնում են՝ Հայաստանը իմ հայրենիքն է, իմ ծննդավայրը, իմ ամենամեծ տունը:

Իմաստի ընկալում

Հենակետային բառերի միջոցով առաջարկել գուշակել, թէ ինչի մասին է նյութը: Ընդունել և խրախուսել բոլորի պատասխանները: Կարդալ դասագրքի ուղերձը: Պատասխանել հարցին:

Ընթերցել դասանյութը՝ուշադրություն դարձնելով արտահայտիչ կարդալուն:

Տալիս ենք հարցեր կամ առաջադրանքներ առարկայի չափորոշչային պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ էր բնակվում տղան:

2. Ինչու՞ տղան հեռացավ տնից:

3. Տղան գտա՞վ ամենից լավ տունը:

4. Ընտրիր մորը բնութագրող բառեր:

5. Ի՞նչ է նշանակում կարոտ: Սովորողը պետք է իմանա, որ կարոտը զգացողություն է, որն առաջանում է որևէ մեկի՝ ում շատ ենք սիրում ,կամ որևէ բանի բացակայությունից՝ ինչ թանկ է մեզ համար: Ամեն մեկս էլ միշտ ինչ-որ բանի կարոտում ենք: Եթե մի քանի օր չենք տեսնում հարազատներին, ընկերներին, ապա կարոտում ենք:Կարոտում ենք նաև մեր տունը, փողոցը, բնակավայրը: Այդ կարոտից ծնվում են երգեր: Կարոտը տանջանք է, որը կեղեքում է մարդու հոգին, բայց առանց որի անհնար է ապրել, քանզի այն կբերի մոռացում, օտարացում, բաժանում: Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան: Բանաստեղծության մեջ կարոտն է տղային բերում հայրենի տուն:

6. Ի՞նչ է նշանակում հայրենի տուն:

Հարցերին պատասխանելու համար սովորողը պետք է կարողանա

1. Գտնել և ընթերցել բանաստեղծության համապատասխան տողերը, իր վերաբերմունքն արտահայտել կարդացածի վերաբերյալ:

2. Կարողանա պատասխանել հարցին և նկարագրել տղայի տրամադրությունը:

3. Կարողանա նկարագրել տղայի մորը՝ օգտվելով բանաստեղծության բովանդակությունից:

4. Կարողանա բացատրել, թե ինչ է կարոտը, պատմի իր կենսափորձի մասին՝ինչը կամ ում է կարոտում: Ներկայացնի, թե իր մոտ ինչ զգացողություններ են առաջանում հայրենի տնից հեռանալիս: Նաև պատմի լսած, դիտած կամ կարդացած պատմություններ՝ հայրենի տան կարոտի մասին:

5. Պետք է իմանա, որ հայրենի տունը մեր հայրենիքն է, մեր ծննդավայրը, մեր հարազատները, մեր հողն ու ջուրը, մեր պատմությունը: Այն մեզ համար քաղցր է, թանկ ու բաղձալի: Ուր էլ որ լինես, միշտ կարոտում ես հայրենի տանը: Ծննդավայրը մարդու մանկությունն է ու հավերժական կարոտը: Հայրենի օջախին ոչինչ , նույնիսկ շքեղ պալատները չեն կարող փոխարինել: Հայրենիքն ու հայրենասիրությունն սկսվում են մանկական օրորոցից, հայրենի տնից:

Իմանա առածներ օտարության մասին:

- Օտարության մեջ ապրողի հացը դառն է, ջուրը՝ թույն:
- Օտար տեղ ապրողի համար մեկ օրը մեկ տարի է:
- Իր բույնը լքած թռչունի նման՝ իր տեղից օտար վայր գնացած մարդն իրեն ստրուկ է զգում:

- Քո ջուրը խմիր քո ամանից և քո ջրհորի աղբյուրից:
- Օտարության մեջ ազատ լինելը այլ գերություն է, իսկ տան մեջ նույնիսկ գերի լինելը՝ այլ ազատություն:

6. Կարողանա օգնել «անհանգիստ տղային»՝ կատարել առաջադրված բառակազմական աշխատանքները :

<u>Կշռադատում</u>

Աշակերտներին տալ հանձնարարություն քառաբաժանման ձևով:

1. Բանաստեղծությունը ձեզ ի՞նչ հիշեցրեց: Իրականությունից ինչ համանման դեպք է ձեզ ծանոթ: Կապել մեր օրերի Արցախում կատարվող դեպքերի հետ:

2. Ի՞նչ զգացումներ ունեցաք տեքստի ընթերցումից: Հիմնավորեք համապատասխան տողերով:

3. Գրել տուն բառով հնգյակ՝

<u>Տուն</u>

Սիրելի, հարազատ,

Պահող, փայփայող,

Քո գիրկը կանչող

Հայրենիք:

4.Գրել տուն բառով ակրոստիքոս՝

<u>Տուն</u>

Տարիներ շարունակ

Ուներ հայը մի երազանք՝

Նորից իր տուն վերադառնալ:

5. Նկարիր քեզ համար ամենալավ տունը և պատմիր:

6. Բանաստեղծությունն արտահայտիչ կարդալ , պատմել, սովորել անգիր:

Այսպիսով ընտրեցի «Ամենից լավ տունը» դասանյութը, քանի որ այն շատ դիպուկ է, հուզական, մեր օրերին համահունչ և մեծ ազդեցություն է ունենում սովորողների վարքագծի, արժեհամակարգի ձևավորման վրա: Բանաստեղծությունը սիրված է աշակերտների կողմից , հետաքրքիր է և նպաստում է, որ սովորողները գան այն համոզման, որ սեփական հայրենիքից ավելի լավ տեղ չկա ամբողջ աշխարհում: Ոչ մի հարստություն, գանձ և շքեղություն չեն կարող փոխարինել հարազատ օջախին, այն տանը, ուր մանուկ օրերին հնչել է մայրական անուշ օրորը: Անցողիկ են փառք ու հարստություն, մնայուն է միայն հայրենի տունը՝ հայրենիքը, որն էլ ավելի քաղցր է ու տենչալի, երբ հեռու ես նրանից, երբ սպառնում է թշնամին: Հայրենիքից հեռու մարդը անհոգ և երջանիկ լինել չի կարող, նրան միշտ տանջելու է կարոտը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մայրենիի դասագրքերում ընդգրկված բոլոր դասանյութերն էլ ունեն դաստիարակչական մեծ նշանակություն և հնարավորություն են ընձեռում ավելի արդյունավետ կազմակերպել սովորողների դաստիարակչական գործընթացը: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում է մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին. ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում և դպրոցում ՝ դաստիարակն ու ուսուցիչը: Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի: Յուրաքանչյուրն իր ստանձնած պարտավորությունները պետք է կատարի բարեխղճորեն: Արժեհամակարգի ձևավորման թերությունները չափազանց դժվար է հաղթահարել հետագա տարիներին, իսկ բացթողումները կարող են պատճառ դառնալ անհատական զարգացման բացասական հետևանքների:

Տարրական դպրոցում կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ընթացքում պետք է հաշվի առնել կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները՝ ձևավորելով հասարակության զարգացման համար անհրաժեշտ անձնային որակներ: Մայրենիի դասագրքի դերը սովորողների արժեկողմնորոշման գործում մեծ է, որի համար պետք է ներառվեն դաստիարակության հետևյալ բաղադրիչները.

- Բարոյական արժեքներ՝ ազնվություն, սեր իր և միջավայրի հանդեպ, հարգանք, հոգատարություն:
- Գեղագիտական արժեքներ՝ գեղեցիկի, մարդու, շրջակա միջավայրի ճանաչում, ընդունում և պահպանում:
- Մտավոր արժեքներ՝ սեր դեպի գիտելիքը, դպրոցը, գիրքը, ինքնաճանաչողություն:
- Իրավական արժեքներ՝ իրավունքի ձևավորում, պարտաճանաչություն, կարգապահություն:
- Ֆիզիկական արժեքներ՝ անձնական հիգենա, առողջություն, օրվա ռեժիմ և արժևորի առողջ ապրելակերպը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս.: Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ:
2. Բաբանսկի Յու. Կ. , Մանկավարժություն, 2-րդ հատոր:
3. Գյուլամիրյան Ձ. Հ. , Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա:
4. Սարգսյան Վ. , Թորոսյան Կ. , Մայրենի 3-րդ դասարան: